ArmLur.am

I SSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

# Ժողովուրդ

16 մարտի հինգշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

38
(2704)

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

## ԼԱՐՎԱԾ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Նիկոլ Փաշինյանը, մամուլի ասուլիսի ժամանակ անդրադառնալով «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Արսեն Թորոսյանի քննադատություններին, նշեց. «Ես գնահատում եմ պարոն Թորոսյանի ձգտումը՝ իր հետ աշխատած մարդուն դժվար իրավիճակում պաշտպանելու, նրա իրավունքների պաշտպանության անհրաժեշտության վրա ուշադրություն հրավիրելու համար: Սա եւս մի ապացույց է, թե ինչպիսի ժողովրդավար կուսակցություն է «Քաղաքացիական պայմանագիրը»: Իրավական առումով հարցի պատասխանը կտա դատաքննությունը, եթե գործը հասնի այդ փուլին»: Մասնավորապես, Արսեն Թորոսյանն իր գրառման մեջ այն ժամանակ իր տեղակալի (Գեւորգ Սիմոնյան-խմբ.) դեմ գործը շինծու է համարել: Փաշինյանը նաեւ նշեց. «Մեր երկրում Աստծուն չհավատացող հոգեւորականներ կան. մեծ ողբերգություն չէ, եթե որեւէ պատգամավոր դատաիրավական համակարգին չի հավատում»,- ասաց Փաշինյանը: Դիտարկմանը՝Ձեզ չի հավատում, վարչապետը հավելեց. «Առավել եւս՝մեծ ողբերգություն չէ»: Իսկ ինչի՞ց է սկսվել Արսեն Թորոսյան-Նիկոլ Փաշինյան հակամարտությունը: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ նրանց հարաբերությունները լարվել են «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչության՝ 2022 թվականի նոյեմբերին տեղի ունեցած ընտրություններից հետո, որոնք կեղծվեցին, եւ վերահաշվարկ իրականացվեց: Իսկ ինչո՞ւ էր այդ հանգամանքը զայրացրել Փաշինյանին: Բանն այն է, որ, իշխանության գալով, եւ նաեւ տարբեր մամուլի ասուլիսերի ու ելույթերի ժամանակ Նիկոլ Փաշինյանն իր իշխանության ամենամեծ ձեռքբերումներից էր համարում արդար ու ազատ ընտրությունները, որոնք չեն կեղծվում: Պարզվում է, սակայն, որ ընտրություններ են կեղծվում հենց իր թիմի ներսում, եւ բողոքարկողը եղել է հենց Արսեն Թորոսյանը: Փաշինյանի խոսքերը, ըստ էության, հերքվեցին հենց իր կուսակիցների կողմից: Ավելին՝Փաշինյանը մամուլում արտահոսքի համար էլ է Արսեն Թորոսյանին մեղադրում:

Նկատենք, որ Հաշվեքննիչ պալատի բացահայտումների մասին հայտնի դարձավ դեռ նախորդ տարի, եւ միայն հիմա է քրեական գործի քննությունը թափ հավաքում, քանի որ Նիկոլ Փաշինյանն այդպիսի հետեւողականությամբ չէր հրահանգել գործն առաջ տանել: Այժմ ժամանակներ են փոխվել, եւ նա պատժում է Արսեն Թորոսյանին իր քաղաքական գաղափարախոսությունը ոչնչացնելու համար:



ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի ու ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հարաբերություններն արդեն նախկինի պես լարված չեն: Եվ հենց դա է պատճառը, որ երեկ լրագրողների հետ զրույցում Պապիկյանը վստահ հայտարարեց. «Ես չեմ պատրաստվում իմ առջեւ դրված խնդիրները կիսատ թողնել, չեմ պատրաստվում հրաժարական տալ: Եվ, այո, շարունակելու եմ իմ սկսած բարեփոխումները, եւ թե որքան կհաջողվի այն իրականացնել, կյանքը ցույց կտա»,- ասաց Պապիկյանը: «Ժողովուրդ» օրաթերթը նախկինում գրել էր, որ նրա ու Փաշինյանի հարաբերությունները տեւական ժամանակ լարված էին, քանի որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչության կեղծված ընտրությունների համար նրան էին մեղադրում՝ իբրեւ պատասխանատուի: Մեր տեղեկություններով՝ամեն ինչ հարթվել է, եւ Նիկոլ Փաշինյանը հասկացել է, որ Սուրեն Պապիկյանը կապ չունի 2022 թվականի նոյեմբերին տեղի ունեցած վարչության կեղծված ընտրությունների հետ: Այս իրավիճակում ուշագրավն այն էր, որ Պապիկյան-Փաշինյան լարվածությունից ցանկանում էր օգտվել Պետական վերահսկողական ծառայության պետ Ռոմանոս Պետրոսյանը՝զբաղեցնելու ՊՆ նախարարի պաշտոնը: Նա չհասավ իր նպատակին: Մեկնաբանության համար դիմեցինք Ռոմանոս Պետրոսյանին, որը նշեց. «Աբսուրդ է, նույնիսկ մեկնաբանելու բան չկա այդտեղ: Խնդրում եմ էդ հարթության եւ բովանդակության հարցեր չուղղել ինձ այսուհետ»:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը հանձնարարել է «Մարտի 1»-ի գործը հսկող դատախազ Հայկ Հովհաննիսյանին Հակակոռուպցիոն կոմիտեից պահանջել «Մարտի 1»-ի գործով մեղադրյալ Գեղամ Պետրոսյանի մասով նյութերը, ուսումնասիրել այն մանրակրկիտ եւ որոշում կայացնել: Նշենք, որ 2008 թվականի «Մարտի 1»-ի գործով ցուցարար Զաքար Հովհաննիսյանի սպանության համար մեղադրվող ոստիկանության զորքերի շտաբի նախկին պետ Գեղամ Պետրոսյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու եւ գործի վարույթը կարճելու մասին միջնորդություն էր ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանին փաստաբան Վաղարշակ Գեւորգյանը: Բանն այն է, որ ավելի քան երեք տարի առաջ ՀՔԾ-ն հայտարարել էր, որ բացահայտել են 2008 թվականի մարտի 1-ին արձանագրված 10 մահվան դեպքերից մեկը: Նշվում էր, որ 2008 թվականին ՀՀ ոստիկանության զորքերի հրամանատարի տեղակալ-շտաբի պետի պաշտոնը զբաղեցրած Գեղամ Պետրոսյանը հրազենի գործադրմամբ դիտավորությամբ կյանքից զրկել է Զաքար Հովհաննիսյանին: 2019 թվականի հունիսի 7-ին Գեղամ Պետրոսյանը կալանավորվեց: Նշենք, որ Զաքար Հովհաննիսյանը հրազենային վնասվածք է ստացել որովայնի շրջանում Մաշտոցի պողոտայի մոտակայքում 2008 թվականի մարտի 1-ի ուշ երեկոյան «Մակարով» տեսակի ատրճանակից արձակված կրակոցի հետեւանքով: Հետագայում պարզ դարձավ, որ զենքը չի հայտնաբերվել, հետեւաբար չկա որեւէ ապացույց: 2019 թվականի օգոստոսի 4-ին Պետրոսյանն ազատ արձակվեց «Երեւան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկից, քանի որ լրացել էր կալանքի երկամյա ժամկետը, իսկ նախաքննական մարմինը՝ՀՔԾ-ն՝ներկայիս Հակակոռուպցիոն կոմիտեն, կալանավորման ժամկետը երկարացնելու մասին միջնորդություն մինչ օրս չի ներկայացրել:



Հաջորդ շաբաթ խորհրդարան կգան Նիկոլ Փաշինյանը եւ նախարարները: Երեքշաբթի՝մարտի 21-ից, խորհրդարանում սկսվում է հերթական նստաշրջանը: Նստաշրջանում նախատեսված է, որ վարչապետը կներկայացնի կառավարության ծրագրի՝ 2022 թվականի կատարման ընթացքի եւ արդյունքների մասին զեկույց, իսկ նախարարները՝յուրաքանչյուրն իր ղեկավարած ոլորտի ծրագրերի կատարողականը: Փաշինյանն ու նախարարները կպատասխանեն պատգամավորների հարցերին: Այսպիսով, բացի չորեքշաբթի օրը նախատեսված ԱԺ-ի հետ հարցուպատասխանից, երեքշաբթի եւս վարչապետը կգա խորհրդարան: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ընդդիմադիրները եւս մասնակցելու են ԱԺ նիստերին, բացառությամբ չորեքշաբթի օրը նախատեսված կառավարության հետ հարցուպատասխանից: Հիշեցնենք, որ այս շաբաթ եւս նախարարները մասնակցում են գլխադասային հանձնաժողովների նիստերին. երեկ ԱԺ էին եկել ՊՆ նախարար Սուրեն Պապիկյանը, ներքին գործերի նախարար Վահե Ղազարյանը, ԱԱԾ ղեկավար Արմեն Աբազյանը, ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը, այսօր էլ խորհրդարան է գալու առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը: Սպասվում է նաեւ, որ խորհրդարան կգա արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանը:

ԶԳՈՆ ԼԻՆԵՆՔ

# ՍԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՎՏԱՆԳ ԿԱ

**Հակառակորդի վերջին սադրանքների եւ բանակում տիրող իրավիճակի մասին «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է ռազմական փորձագետ, ՊՆ նախկին խոսնակ Արծրուն Հովհաննիսյանի հետ:**



**-Պարոն Հովհաննիսյան, վերջին օրերին թշնամին կրկին ակտիվացել է, սադրանքների է դիմում ոչ միայն Արցախի, այլ նաեւ Հայաստանի սուվերեն տարածքների ուղղությամբ: Հայաստանի ՊՆ պաշտոնական հաղորդագրություններից կարող ենք արձանագրել, որ թիրախում Սյունիքն է, այդ ուղղությամբ են հիմնական սադրանքները լինում: Ինչո՞վ եք պայմանավորում այս ակտիվությունը.**

-Պետք է զգոն լինենք, ինչ-որ առումով փորձագիտական դաշտում նաեւ կանխատեսվում էր, որ օրերը տաքանալուն պես սահմանին սադրանքները կավելանան. մի կողմ թողնենք նույնիսկ աշխարհաքաղաքական տարատեսակ դրդապատճառները, զուտ ռազմական լոգիկան էլ էր սա ասում: Դեռեւս փետրվարին այս մասին խոսվեց, որ հենց եղանակները տաքանան, որոշ տեղերում սադրանքներ կարող են լինել: Արցախի դեպքից հետո սադրանքներ պետք է սպասել ցանկացած հատվածում:

**-Իր ասուլիսում Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ մեծ է սահմաններին նոր էսկալացիայի հնարավորությունը: Ձեր գնահատմամբ՝հնարավոր նոր էսկալացիայի դեպքում մեր բանակն ի վիճակի կլինի՞ դիմակայել, կա՞ն բավարար ռեսուրսներ:**

-Եթե նկատի ունեք նյութական սպառազինությունը, ուրեմն մենք զիջում ենք Ադրբեջանին, միշտ էլ զիջել ենք, այնպես չի, որ այս պահին ամեն ինչ իդեալական է: Բանակի ռեսուրսները պրոբլեմ են, մասնավորապես՝ զենք-զինամթերքի մասով, դրա համար էլ հարցը մինչ էսկալացիային հասնելը փորձ է արվում այլ զսպող միջոցներ կիրառել, այդ թվում՝ միջազգային դիտորդներ եւ այլն: Իսկ եթե խոսքը վերաբերվում է բանակի պատրաստականությանը, ապա բանակը պատրաստ է իր առջեւ դրած խնդիրը կատարել, ինչպես 2022թ.-ի սեպտեմբերին եղավ, էլի նույն իրավիճակն է հիմա. զենք-զինամթերքի մասով մենք շարունակում ենք զիջել հակառակորդին, բայց մեր տղաները հերոսաբար, հաճախ իրենց կյանքի գնով դիմակայեցին:

**-Իշխանության ներկայացուցիչները պարբերաբար խոսում են բանակի արդիականացման ու վերազինման ծրագրերի մասին: Ի՞նչ կասեք այս մասին: Ձեր գնահատմամբ՝ արդյունավե՞տ են այս ուղղությամբ տարվող աշխատանքները.**

-Շատ արդյունավետ են, բայց արդյոք դրանք բավարա՞ր են. սա հարց է, որին շատ է անդրադարձ եղել: Այսօր աշխարհում ստեղծվել է մի իրավիճակ, որ մեր պես փոքր պետությունը չի կարող գնալ խանութ ու կարտոֆիլի նման զենք առնել, բերել տուն: Դժբախտաբար, այնպիսի իրավիճակ է այսօր ստեղծվել, որ զենք-զինամթերքի համար երկար պետք է տառապենք, իսկ մեծ պետություններն էլ ազատ զենք չունեն: Երբ անգամ քո համար մեկ դաշնակիցը չի կարողանում քեզ զենք տալ, իսկ մնացածներին նախ պետք է կարողանաս համոզել, ապացուցել, որպեսզի քեզ զենք տան, բացի դա, նրանք պետք է կարողանան, որ քեզ էլ զենք տան: Սա երկար տարիների ռազմավարական եւ ռազմական մատակարարումների սխեմաների խնդիր է նաեւ, այսինքն՝ երբ դու երկար տարիներ մեկ պետությունից ես սնվել, երկար տարիներ այլընտրանք չես ունեցել, սեփական ռազմական արդյունաբերության զարգացման համար անհրաժեշտ ջանքեր չես ներդրել, գալիս են այպիսի ծանր ժամանակներ, պետք է կարողանաս հաղթահարել այս ամենը:

**-Հաշվի առնելով Ադրբեջանից հնչող հայտարարությունները, ինչպես նաեւ սահմանային վերջին լարումները՝ առաջիկայում լայնածավալ էսկալացիան հավանական համարու՞մ եք:**

-Ամեն ինչ էլ հավանական համարում եմ: Ես հետախուզական ինֆորմացիա չունեմ, որ ամբողջական գնահատական տամ էսկալացիայի մասով, ամբողջական գնահատականի համար պետք է շատ մանրամասների տիրապետես: Ակտիվություն կա, որի մասին խոսում են եւ մեր ռազմաքաղաքական ղեկավարությունը, միջազգային դիտորդները, միջազգային վերլուծական կենտրոններ, անգամ Պետդեպի մակարդակով են խոսում, որ սադրանքների վտանգ կա:

*Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ*

ԼՈՒՐԵՐ

## ՏՈՄՍԵՐԻ ՎԱՃԱՌՔ՝ ՍԵՎ ՇՈՒԿԱՅՈՒՄ

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան կրկին չի կարողանում վերահսկել խաղերի տոմսերի վաճառքն ու սեւ շուկան: Մարտի 6-ին տեղեկութուն հրապարակվեց այն մասին, որ սկսվել է Հայաստան-Թուրքիա ֆուտբոլային տոմսերի առցանց վաճառքը: Ընդ որում՝ տոմսերը ինչպես առցանց, այնպես էլ Վ. Սարգսյանի անվան Հանրապետական մարզադաշտի տոմսարկղից հնարավոր է գնել միայն անձնագրային նույնականացում անցնելուց հետո: Մեկ անձը կարող է գնել ոչ ավելի, քան երկու տոմս:

ՀՖՖ-ից նաեւ հայտնել էին, որ տոմսերի վաճառքը Վ. Սարգսյանի անվան Հանրապետական մարզադաշտի տոմսարկղում կմեկնարկի ավելի ուշ: Արդեն մարտի 13-ին հայտնի դարձավ, որ բոլոր տոմսերը սպառվել են, եւ մարզադաշտի տոմսարկղում տոմսերի վաճառք չի լինի: Եվ, ահա, այս հանգամանքն առաջացրել է երկրպագուների զայրույթը եւ սկիզբ դրել տոմսերի վաճառքի սեւ շուկայի:

Նախ նշենք, որ օնլայն տարբերակով գնելու պարագայում տոմսերի արժեքներն են՝

- հյուսիսային եւ հարավային տրիբունաներ՝2000 դրամ,
- արեւելյան տրիբունա՝ 3000 եւ 5000 դրամ,
- արեւմտյան տրիբունա՝10000 դրամ:

Իսկ հիմա կան անձինք, որոնք տոմսերը վաճառում են աստղաբաշխական թվերով:

Օրինակ՝ արեւելյան տրիբունայում այժմ կարող եք մեկ տոմսը ձեռք բերել 25-35 հազար դրամով, հարավային եւ հյուսիսային տրիբունաներում մեկ տոմսի արժեքը 20 հազար դրամ է, արեւմտյան տրիբունայում մեկ տոմսի արժեքը հասնում է 50 հազար դրամի:

Օգտատերերը բողոքում են, թե չեն հասցրել տոմսեր գնել առցանց եղանակով եւ սպասել են դրամարկղում վաճառքի, այնինչ պարզվել է, որ շատ արագ են սպառվել տոմսերը, եւ շատերը դա կասկածելի են համարում:

## ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆ՝ ԱՍՈՒԼԻՍԻՑ ԱՌԱՋ

Մարտի 14-ին տեղի ունեցավ Նիկոլ Փաշինյանի մամուլի ասուլիսը, որը տեւեց չորսուկես ժամ: Ինչպես նախորդ անգամ, այս անգամ եւս կառավարության աշխատակազմը լրագրողներին ասուլիսին հրավիրել էր մեկ ժամ առաջ եւ նախորդ անգամվա պես նրանց խումբ-խումբ էր ուղեկցել ասուլիսների համար նախատեսված վայր: Այս անգամ, չգիտես՝ ինչու, կառավարության աշխատակազմը բավական ուշադիր էր տեղանքի մաքրության հանդեպ: Մասնավորապես, վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Տարոն Չախոյանն ուշադիր դեմքով զննում էր տեղանքը, փռված գորգը, դրված բաժակը եւ լուրջ դեմքով հրահանգներ տալիս: Դա էր պատճառը, որ երեք անգամ ստիպված եղան գորգը մաքրել, ապա Նիկոլ Փաշինյանի աթոռը, սեղանը եւ այլն: Ստացվում է՝ Տարոն Չախոյանը կառավարությունում մաքրության ապահովում է իրականացնում:

*ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*

## ՍՊԱՍՈՒՄ ԵՆ՝ ԹՈՐՈՍՅԱՆԻՑ ՀԵՏՈ ՈՒՄ ՀԵՐԹՆ Է

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ԱԺ պատգամավոր Արսեն Թորոսյանի շուրջ բարձրացած մեծ աղմուկից ՔՊ-ական պատգամավորները շունչները պահած սպասում են՝ ում հերթն է հաջորդը: Բայնն այն է, որ Թորոսյանի պաշտոնավարման ժամանակ եղած կուռուպցիոն վերջին բացահայտումները իսկապես բարկացրել են Փաշինյանին, որը սիրում է տարբեր առիթներով հայտարարել, թե Հայաստանում այլեւս կոռուպցիա չկա, այնինչ ստացվում է՝ հենց իր թիմակիցներն են կոռուպցիայի կենտրոնում: Թորոսյանի հետ կապված այս աղմուկից հետո Փաշինյանը որոշել է պատժել թիմակիցներից մեկ-երկուսին եւս, որպեսզի օրինակ լինի մյուսներին: Թիմակիցներին «զոհաբերելով»՝Փաշինյանը մտադիր է մեկ կրակով երկու նապաստակ սպանել. նախ հանրությանը ցույց կտա, որ ինքը կոռուպցիայի դեմ անզիջում պայքար է մղում ու չի խնայում անգամ սեփական թիմակիցներին, բացի այդ, նաեւ «կզսպի» մյուս թիմակիցներին, որպեսզի չհայտնվեն կոռուպցիոն նման սկանդալների կենտրոնում: Բանն այն է, որ այդ պատմությունները ազդում են հենց Փաշինյանի վարկանիշի վրա: ՔՊ-ական պատգամավորներից շատերն էլ այս ընթացքում հասցրել են կտրուկ բարելավել իրենց սոցիալական վիճակը, նոր բնակարաններ, մեքենաներ ձեռք բերել..., դրա համար էլ շունչները պահած սպասում են, թե Փաշինյանի հրահանգով ու իրավապահների «թեթեւ ձեռքով» ում անունն է հայտնվելու կոռուպցիոն սկանդալի կիզակետում:

## ԵՐԿՈՒ ԹԵԿՆԱԾՈՒ

Դատական համակարգը կերկփեղկվի: Բանն այն է, որ ՀՀ բարձրագույն դատական խորհրդի անդամ դառնալու համար ՀՀ վերաքննիչ քրեական դատարանից առաջադրվել են միանգամից երկու թեկնածուներ՝դատավոր Արշակ Վարդանյանը եւ իշխանության «սրտի թեկնածու» Ռուբիկ Մխիթարյանը: Իհարկե, ԲԴԽ-ն ամեն ինչ անում է, որ անդամ դառնա իրենց «սրտի թեկնածուն», իսկ դատական համակարգի զգալի մասը մյուս՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Արշակ Վարդանյանի կողմն է, որը աչքի է ընկել իր համարձակ որոշումներով: Մասնավորապես, օրերս Արշակ Վարդանյանը որոշում էր կայացրել՝ արձանագրելով, որ Նիկոլ Փաշինյանի ավտոշարասյան վթարից մահացած Սոնա Մնացականյանի դեպքով քննությունը իրականացվել է խախտումներով: Մեզ հայտնի դարձավ, որ Ռուբիկ Մխիթարյանի համար լոբբինգ է անում Սնանկության դատարանի նախագահ Արթուր Աթաբեկյանը, որը եւս իր թեկնածությունը առաջադրել է ԲԴԽ անդամի թափուր տեղի համար: Բանն այն է, որ Աթաբեկյանը Նիկոլ Փաշինյանի ընտանիքի քավոր, ՔՊ-ական պատգամավոր Վահե Ղալումյանի քեռու տղան է ու Մխիթարյանի հետ նախկինում աշխատել է դատական դեպարտամենտում: Ասել է թե՝ դատական համակարգը երկու քարի արանքում է՝կամ դեմ պետք է գնա ԲԴԽ-ին եւ ընտրի դատավոր Արշակ Վարդանյանին, կամ ԲԴԽ-ին հաճոյանալու համար ձայնը տա Ռուբիկ Մխիթարյանին: Տեսնենք, թե ինչպես կզարգանան իրադարձությունները դատական համակարգում: Հիշեցնենք՝ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ապրիլի 9-ին ՀՀ բարձրագույն դատական խորհրդի երկու դատավոր անդամները կլքեն իրենց պաշտոնները: 2023 թվականի ապրիլի 9-ին լրանում է Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամներ Սերգեյ Չիչոյանի եւ Անի Մխիթարյանի պաշտոնավարման ժամկետը, ուստի նրանք կհեռանան ԲԴԽ-ից, եւ նրանց տեղի համար պայքարի են դուրս եկել վերոնշյալ դատավորները:

## ԶԱՐԳԱՑՄԱՆ ԼԱՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ Է ՍՏԵՂԾՈՒՄ



Նախկինում անդրադարձ կատարել ենք կրիպտոարժույթների ու բլոքչեյն համակարգերին. դրանք լայն թափով զարգանում ու աճում են աշխարհում: Կան երկրներ, որտեղ պետությունն օրենսդրական մակարդակով կարգավորել է ոլորտը, տեղ-տեղ նույնիսկ պետությունն է թողարկում սեփական կրիպտոարժույթը:

Հայաստանում ոլորտը ներկայացնող ամենախոշոր ընկերություններից մեկը հանդիսացող TETChange-ից մեզ փոխանցեցին, որ կրիպտոշուկայում նկատվող ակտիվության ֆոնը մեր երկրում տնտեսական զարգացման լավ հնարավորություն է ստեղծում, ամենաքիչը այն լրացուցիչ ազդակ կարող է հաղորդել տնտեսության զարգացմանը: Ընկերության հիմնադիր Հրաչյա Դանիելյանը մեզ հետ զրույցում օրինակ բերեց հարեւան Վրաստանը, որտեղ մշակվում է նախագիծ, ինչը կկարգավորի կրիպտոարժույթների ինտեգրացիան՝ որպես ֆինանսական համակարգի մաս: Նա ավելացրեց նաեւ, որ չնայած մեզանում ոլորտը կարգավորված չէ, բայց առանձին ընկերություներ ստանձնել են համակարգը կարգավորող պիոներների դերը ու ցանկացած պահի պատրաստ են օգնել պետության համապատասխան մարմիններին՝ զարգացնելու ոլորտը: TETChange ընկերությունից մեզ փոխանցեցին, որ Հայաստանի տնտեսության վրա կրիպտոարժույթների եւ բլոկչեյն տեխնոլոգիաների իրական ազդեցության մասին չկան մասնագիտական հաշվարկներ, չկա նաեւ դրանց զարգացման դեպքում տնտեսության իրական սեկտորի աճի մասին ռեալ պատկերացումներ: Դանիելյանը հավելեց նաեւ, որ պատրաստ են ցուցաբերել համապատասխան մասնագիտական աջակցություն ՀՀ կենտրոնական բանկի մասնագետներին, եթե նման առաջարկ ստանան:

Հատկանշական է, որ համաշխարհային լուրջ ընկերությունների ուսումնասիրությունների համաձայն՝ մինչեւ 2023թ. վերջը կրիպտոարժույթ օգտագործողների թիվը կհասնի մի քանի հարյուր միլիոն մարդու, ավելին՝ շատ տնտեսագետներ կարծում են, որ կշահեն այն պետությունները, որոնք հնարավորինս արագ կընդունեն կրիպտոփոխանցումները՝ որպես պաշտոնական վճարամիջոց:

Ի դեպ, անցած տարի վերջապես ԲՈՒ-ը գրանցել է ոլորտի վերաբերյալ առաջին թեկնածուական թեզը, որի հեղինակը «Տետչենջ» ընկերության հիմնադիրն է, իսկ թեզի թեման՝ «Էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգերի եւ կրիպտոարժույթների ֆինանսական կառավարման հիմնախնդիրները»:

ՊԱՏԱՍԽԱՆԵԼ Է

# ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ՊԵՏՔ Է ԱՎԵԼԻ ԱՄՈՒՐ ԼԻՆԵՆ

**Աժ մարդու իրավունfների ղաcsղանության եւ հանրային հարցերի մcsական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրում է. ««Դաժան վերաբերմունfի եւ անղատժելիության դեմ արդյունավեs ղայfարը Եվրողայի խորհրդի ցանկացած անդամ ղեsության կարեւորագույն ղարsականություններից մեկն է». ԵԽ գլխավոր fարsուղար Մարիա Պեյչինովիչ Բուրիչը ղաsասխանել է անչափահասներին ծեծի ենթարկելու ահազանգերի վերաբերյալ իմ հրաsաղ նամակին:**



Փետրվարի 9-ին ստացել էի ահազանգ, ըստ որի՝ Երեւան քաղաքի Էրեբունու ոստիկանության բաժնի աշխատակիցները ծեծել են անչափահասների: Հրապարակային դարձած տեղեկությունների համաձայն՝ նրանցից մեկի հարցաքննության ժամանակ քննչական մարմնում ոստիկանության աշխատակիցները բռնություն էին կիրառել փաստաբաններ Էմանուել Անանյանի եւ Մարզպետ Ավագյանի նկատմամբ:

«Խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր մասնակից պետություն ձեռնարկում է օրենսդրական, վարչական, դատական կամ այլ արդյունավետ միջոցներ իր իրավազորության ներքո գտնվող ցանկացած տարածքում խոշտանգումների դեպքերը կանխելու համար:

Կոնվենցիայի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր մասնակից պետություն պարտավորվում է իր իրավազորության ներքո գտնվող ցանկացած տարածքում կանխել դաժան, անմարդկային եւ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի մյուս ձեւերը, որոնք չեն դասվում 1-ին հոդվածում որպես խոշտանգում սահմանվածների շարքին, երբ այդպիսի գործողությունները կատարվում են պետական պաշտոնյայի կամ պաշտոնապես հանդես եկող մեկ այլ անձի կողմից կամ նրանց հրահրմամբ կամ նրանց գիտությամբ կամ լուռ համաձայնությամբ:

Շտապ գրություն էի ուղարկել ԵԽ գլխավոր քարտուղարին՝ խնդրելով հասցեական գնահատական ներկայացված, հանրության շրջանում խորը մտահոգություններ առաջացրած դեպքի առնչությամբ:

ԵԽ գլխավոր քարտուղար Մարիա Պեյչինովիչ Բուրիչից ստացել եմ պատասխան, որ դաժան վերաբերմունքի եւ անպատժելիության դեմ արդյունավետ պայքարը ԵԽ ցանկացած անդամ պետության վրա դրված կարեւորագույն պարտականություններից մեկն է՝ ապահովելու մարդու իրավունքների պաշտպանությունը եւ օրենքի գերակայությունը՝ ի շահ իր քաղաքացիների եւ իր իրավազորության ներքո գտնվող բոլոր այլ անձանց:

Բուրիչը վստահություն է հայտնել, որ ՀՀ քննչական կոմիտեն կիրականացնի դաժան վերաբերմունքի մասին այդ մեղադրանքների վերաբերյալ արդյունավետ եւ պատշաճ ժամկետներում նախաքննություն, եւ որ նոր ձեւավորված Ներքին գործերի նախարարությունը հետեւողական կլինի, որ ՀՀ ոստիկանությունում պահվողների նկատմամբ դաժան վերաբերմունքի դեմ երաշխիքներն ավելի ամուր լինեն:

«ԵԽ-ն կշարունակի աշխատել համապատասխան մարմինների հետ Հայաստանի համար ԵԽ նոր գործողությունների ծրագրի շրջանակներում՝ մեծացնելու ենթադրյալ դաժան վերաբերմունքի դեպքերի հետաքննության արդյունավետությունը»:

Տիկին Բուրիչը միաժամանակ ողջունել է, որ Հայաստանը միացել է ԵԽ անդամ երկրների ոստիկանության ծառայությունների ներկայացուցիչների ցանցին, ինչը կօգնի ապահովել, որ Հայաստանի ոստիկանության աշխատանքը համապատասխանի Եվրոպայի խորհրդի չափանիշներին»:

ՕՐՎԱ ԽԾԱՆԿԱՐ

## ՓԱՇԻՆՅԱՆԸ ԱՅՑԵԼԵԼ Է ՊՊԾ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը երեկ այցելել է Պետական պահպանության ծառայություն՝ կառույցի 2022 թվականի գործունեության հաշվետվությունը քննարկելու նպատակով:

Խորհրդակցությանը մասնակցել են փոխվարչապետներ Մհեր Գրիգորյանը եւ Տիգրան Խաչատրյանը, վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը, Անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը, Պետական վերահսկողական ծառայության ղեկավար Ռոմանոս Պետրոսյանը, Պետական պահպանության ծառայության պետ Սարգիս Հովհաննիսյանը, ֆինանսների նախարարի տեղակալ Վահան Սիրունյանը, ՊՊԾ ղեկավար կազմը, պաշտոնատար այլ անձինք:

Վարչապետին զեկուցվել է Պետական պահպանության ծառայության կողմից 2022 թվականին կատարված աշխատանքների եւ համակարգի բարեփոխումների վերաբերյալ:

## ԲՐՅՈՒՍՈՎԻ ՆՈՐ ՌԵԿՏՈՐԸ

Լեզվաբան, հայերենագետ, ԿԳՄՍՆ լեզվի կոմիտեի նախագահ Դավիթ Գյուրջինյանը նշանակվել է Բրյուսովի անվան համալսարանի ռեկտորի պաշտոնակատար:

Այդ մասին «Ֆեյսբուք»-ի իր էջում հայտնել է բուհի ռեկտորի նախկին պաշտոնակատար Ցոլակ Ակոպյանը:

Հիշեցնենք՝ ԿԳՄՍ նախարարության որոշմամբ՝ վերջին շրջանում Բրյուսովի անվան պետական համալսարանի ռեկտորի պարտականությունները կատարում էր պրոռեկտոր Ցոլակ Ակոպյանը:

Հիշեցնենք՝ հունվարի 12-ին լրացել էր բուհի ռեկտոր Կարինե Հարությունյանի լիազորությունների ժամկետը:

Երեկ էլ, ՀՀ արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանի հրամանով, հաստատվել է «Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի ժամանակավոր խորհրդի կազմը:

Նշենք, որ ուսանողները ու դասախոսները դեմ են այս որոշմանը եւ պայքարելու են:

Ռեկտորի նշանակման մասին նոր որոշումից հետո Բրյուսովի անվան համալսարանի իրավիճակի շուրջ հետաքրքրությունն ավելացել է: Մասնավորապես, հասարակական սեկտորի ներկայացուցիչները դիմել են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանին եւ հասկացրել, որ պետք չէ նման քայլեր անել եւ ոստիկանների ուղեկցությամբ ռեկտոր տանել համալսարան՝ ներկայացնելու համար: ArmLur.am-ի տեղեկություններով՝ որոշում է կայացվել նրան բուհում ներկայացնելը հետաձգել:

ԻՆՉ Է ԿԱՏԱՐՎԵԼ

# ԶՈՐԱՄԱՍԸ ՎԱՃԱՌԵԼ ԵՆ ԿԻՊՐՈՍԻ ՔԱՂԱՔԱՑՈՒՆ

**ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության պետական շահերի պաշտպանության բաժնի կողմից 2022 թվականին կատարված ուսումնասիրությամբ պարզվել է, որ Պաշտպանության նախարարությանն անհատույց օգտագործման իրավունքով ամրացված Գեղարքունիքի մարզի Բերդկունք համայնքում գտնվող զորամասը (զորանոցը՝ 1878.3 մ2, պահակատունը, շտաբը, էլեկտրական ենթակայանը, կաթսայատունը, պոմպակայանը՝ 370.1 մ2 մակերեսով, եւ հատուկ նշանակության 1.9 հա հողամասը) 2012 թվականի նոյեմբերի 30-ին առուվաճառքի պայմանագրով օտարվել է ՌԴ քաղաքացի Գ.Վ.-ին:**



Համաձայն առուվաճառքի պայմանագրի՝ նախարարության անունից ՀՀ ՊՆ աշխատակազմի ղեկավար Գ.Հ.-ի կողմից 2012 թվականի նոյեմբերի 13-ին տրված լիազորագրով, որպես լիազոր անձ, հանդես է եկել քաղաքացի Ա.Հ.-ն: Անշարժ գույքի՝ շինության եւ հողատարածքի վաճառքի գինը կազմել է 101 մլն 326 հազար դրամ: Առուվաճառքի պայմանագիրը վավերացրել է Կենտրոն նոտարական տարածքի նոտար Ա.Ա.-ն: 2012 թվականի դեկտեմբերի 3-ին եւ դեկտեմբերի 10-ին Գ.Վ.-ն դիմումներ է ներկայացրել Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմ (այսուհետեւ՝ Կոմիտե)՝ խնդրելով կատարել իրավունքի պետական գրանցում, սակայն Կոմիտեն մերժել է իրավունքի պետական գրանցման վերաբերյալ դիմումները՝ հիմնավորելով, որ գնված օբյեկտի սպասարկման համար անհրաժեշտ հողատարածքը հանդիսանում է հատուկ նշանակության հողատարածք, որը չի կարող լինել քաղաքացու սեփականություն, ուստի դիմումին ընթացք կտրվի սահմանված կարգով հողամասի նպատակային նշանակությունը փոխելուց եւ հասցեի որոշում ներկայացնելուց հետո: Կադաստրային գործում առկա փաստաթղթերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ ՀՀ վարչապետի՝ 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացության եւ համայնքի ղեկավարի առաջարկության հիման վրա՝ Գեղարքունիքի մարզի Բերդկունք համայնքի ավագանու՝2013 թվականի օգոստոսի 27-ի թիվ 5 որոշմամբ՝ համայնքի գլխավոր հատակագծի կատարվել են փոփոխություններ. հողամասի «Հատուկ նշանակության հողեր» (ռազմական) նպատակային նշանակությունը փոփոխվել է՝ ստանալով «Հատուկ պահպանվող տարածքների հողեր» (հանգստի համար նախատեսված) նպատակային նշանակություն: Կադաստրային գործում առկա է նաեւ Բերդկունք համայնքի ղեկավար Բ.Դ.-ի կողմից 2013 թվականին տրված տեղեկանք այն մասին, որ վերոնշյալ 1.73 հա (հողամասի չափը քարտեզագրման արդյունքում ճշգրտվել եւ նվազել է) հողամասը կառուցման եւ սպասարկման համար «չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաեւ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ»:

Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի ղեկավարի 2022 թվականի դեկտեմբերի 20-ի 1136-Ա որոշմամբ՝ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Բերդկունք բնակավայրի 5-րդ մայրուղու նրբանցքի թիվ 7 հասցեում գտնվող, Գ.Վ.-ին սեփականության իրավունքով պատկանող 1.73 հա հողամասի նպատակային նշանակությունը համապատասխանեցվել է Բերդկունք համայնքի պարզեցված գլխավոր հատակագծում փոփոխության նախագծին:

«Հատուկ նշանակության» նպատակային նշանակության հողերից փոխվել է «Հատուկ պահպանվող տարածքների» նպատակային նշանակության հողատեսքի, իսկ հողամասի գործառնական նշանակությունը «Հատուկ նշանակության» (ռազմական) գործառնական նշանակության հողատեսքից փոխվել է «Հանգստի համար նախատեսված» գործառնական նշանակության հողատեսքի: Նույն որոշմամբ հողամասի վրա գտնվող «Զորանոցի» գործառնական նշանակությունը փոխվել է «Հյուրանոցի», իսկ «Շտաբի» գործառնական նշանակությունը՝ «Հյուրատան»:

Վերոնշյալ որոշման հիմքով՝ Գ.Վ.-ի անվամբ Կոմիտեի կողմից 2022 թվականի դեկտեմբերի 22-ին տրվել է վկայական, որով Բերդկունք համայնքի 5-րդ մայրուղու նրբանցքի 7 հասցեում գտնվող 1.73 հա հողամասի եւ շինությունների նկատմամբ գրանցվել է վերջինիս սեփականության իրավունքը:

Վկայականի «Հողամասի բնութագրերը» մասում հողամասի նպատակային նշանակությունը նշված է «Հատուկ պահպանվող տարածքներ», գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ «Հանգստի համար նախատեսված», իսկ «Շինությունների բնութագրեր» մասում շինությունների տեսակը փոփոխվել է. «Զորանոցը» անվանափոխվել է «Հյուրանոցի», իսկ «Շտաբը»՝ «Հյուրատան»:

Վերը նշված փոփոխություններից վեց օր հետո՝ 2022 թվականի դեկտեմբերի 28-ին, Գ.Վ.-ն նշված հողատարածքը եւ շինությունները 158 մլն դրամով վաճառել է Կիպրոսի Հանրապետության քաղաքացի Է.Ա.-ին այն դեպքում, երբ Սահմանադրությամբ արգելվում է Հայաստանում օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց կողմից հողի նկատմամբ սեփականության իրավունք ունենալը (բացառություն են կազմում միայն ՀՀ-ում կացության հատուկ կարգավիճակ ունեցող անձինք): Նկատի ունենալով, որ ուսումնասիրությամբ պարզված հանգամանքներն առերեւույթ պարունակում են արարքի կատարման պահին գործող՝ 18.04.2003 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածով նախատեսված արարքի հատկանիշներ (պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը կամ լիազորություններն անցնելը)՝ Դատախազության կողմից ուսումնասիրության արդյունքները 2023 թվականի մարտի 10-ին ուղարկվել են Հակակոռուպցիոն կոմիտե՝ քրեական վարույթ նախաձեռնելու հարցը լուծելու համար: Մարտի 13-ին Հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասին 2-րդ կետի հատկանիշներով (պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը կամ լիազորություններն անցնելը, որի արդյունքում պատճառվել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս):

ՔՆՆԻՉԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՇԱՌՔ ՍՏԱՆԱԼՈՒ ԴԵՊՔ

**ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Աջափնյակ եւ Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնում ձեռք են բերվել նույն քննչական բաժնում քննվող քրեական վարույթով տուժողի դատավարական կարգավիճակ ունեցող անձից քննիչի կողմից կաշառք ստանալու վերաբերյալ տվյալներ:**

2023 թվականի մարտի 13-ին Կոտայքի մարզի 27-ամյա բնակիչը հաղորդում է ներկայացրել այն մասին, որ 2022թ. օգոստոսի 1-ից ՀՀ քննչական կոմիտեի վերոնշյալ քննչական բաժնում քննվող քրեական վարույթներից մեկով ունի տուժողի դատավարական կարգավիճակ, որի շրջանակներում 12.000 ԱՄՆ դոլար գումարի խարդախության զոհ է դարձել: Ըստ հաղորդման՝ քրեական վարույթի նախաքննության ընթացքում վարույթն իրականացնող քննիչն իրենից պահանջել է 500 ԱՄՆ դոլար գումար, որպեսզի այն փոխանցի դատախազին առերեւույթ հանցանք կատարած անձին գտնելու նպատակով եւ մեկ շաբաթ անց հետ վերադարձնի նշված գումարը: Հետագայում քննիչը հրաժարվել է գումարը հետ վերադարձնել՝ հայտնելով տարաբնույթ, անհիմն պատճառաբանություններ: 2023 թվականի մարտի 10-ին հիշյալ քննիչը զբաղեցրած պաշտոնն այլեւս զբաղեցրած չլինելու պայմաններում 27-ամյա երիտասարդի հաշվին փոխանցել է 204.000 ՀՀ դրամ եւ պահանջել մոտենալ քննչական բաժին քննությունը շարունակելու նպատակով: Նկատի ունենալով, որ 27-ամյա երիտասարդի կողմից ներկայացրած հաղորդումը պարունակում է ՀՀ քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված առերեւույթ հանցանքի փաստական նկարագրություն՝ ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Աջափնյակ եւ Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ: Հաշվի առնելով, որ առերեւույթ կոռուպցիոն հանցագործության դեպքերով նախաքննությունն իրականացվում է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում՝ նախաձեռնված քրեական վարույթի նյութերն ուղարկվել են ՀՀ դատախազություն քննչական ենթակայության հարցը լուծելու նպատակով:

Նշված քննիչը ՀՀ քննչական կոմիտեում զբաղեցրած պաշտոնից ազատվել է 2022թ. հոկտեմբերի 12-ին:

ԼՈՒՐԵՐ

## ԿԱ ՎԻՐԱՎՈՐ

Մարտի 14-ին՝ժամը 20:14-ին, Սյունիքի մարզային ճգնաժամային կառավարման կենտրոն ահազանգ է ստացվել, որ Գորիս քաղաքի Ավանգարդ փողոցում այրվում է Nissan Tiida մակնիշի ավտոմեքենա: Դեպքի վայր է մեկնել ՆԳՆ ՓԾ մարզային փրկարարական վարչության հրշեջ-փրկարարական ջոկատից մեկ մարտական հաշվարկ: Պարզվել է, որ Ավանգարդ փողոցի թիվ 31 հասցեում կայանած Nissan Tiida մակնիշի ավտոմեքենայում (վարորդ՝ Հ. Խ., ծնված 1992 թ.) պայթել է հեղուկ գազի բալոնը, ինչի հետեւանքով տեղի է ունեցել հրդեհի բռնկում:

Մինչ փրկարարների՝ կանչի վայր հասնելը վարորդը եւ ուղեւոր Գ. Ա.-ն (ծնված 1991 թ.) տեղի ուժերով տեղափոխվել են Գորիսի ԲԿ, որտեղ տուժածների առողջական վիճակը գնահատվել է բավարար: Հրդեհը մեկուսացվել է ժամը 20:35-ին, մարվել՝20:55-ին: Այրվել է ավտոմեքենան:

## ԴԱՏԻ Է ՏՎԵԼ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ գործարար Բարսեղ Բեգլարյանին՝ Ֆլեշի Բարսեղին պատկանող «Ֆլեշ» ՍՊԸ-ն դատի է տվել ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական եւ հրդեհային անվտանգության տեսչական մարմնին: Ըստ էության, տեչական մարմինը խախտումներ է հայտնաբերել նրան պատկանող ընկերությունում, ինչի հետ համամիտ չեն եւ դիմել են դատարան:

## ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ ինքնասպանության փորձ է կատարվել Չարենցավանում:

42 տարեկան կինը տանը ինքնասպանություն գործելու նպատակով խմել է դեղորայք: Իսկ ի՞նչն եղել պատճառը: Բանն այն է, որ հունվարի 18-ին նրա դուստրը ծննդաբերելիս մահացել է:

*ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

## ԽՈՇՈՐ ԱՎՏՈՎԹԱՐ

Սյունիքի մարզում երեկ՝ մարտի 15-ին, խոշոր ավտովթար է տեղի ունեցել. Ժամը 13:50-ի սահմաններում Mercedes մակնիշի ավտոմեքենան Սիսիան-Իշխանասար ավտոճանապարհի 1-ին կմ հատվածում դեռեւս անհայտ հանգամանքներում դուրս է եկել երթեւեկելի գոտուց, մի քանի պտույտ շրջվելով՝ հայտնվել դաշտում:

Վթարի հետեւանքով 4 հոգի տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներով տեղափոխվել են «Աղիտուի» զինվորական հոսպիտալ:

Վթարի փաստով Հայաստանի քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչության Սիսիանի քննչական բաժնում նախաձեռնվել է վարույթ:

Ոստիկանությունն ու քննչական բաժինը պարզում են վարորդի եւ վիրավորների ինքնությունը:

Կայքի տեղեկություններով՝ բոլոր 4 վիրավորները ծառայում են ՀՀ ՊՆ N զորամասում, եւ բոլորը սպաներ են:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ մարտի 14-ից 15-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտել են հանցագործության 89 դեպք, որոնցից 5-ը՝ նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

## 5,7 ՀԱ ՏՐՎԵԼ Է ԳՈՐԾԱՐԱՆԻՆ

2023թ. հունվարի 16-ին Կոտայքի մարզի Ջրվեժ գյուղում տեղակայված «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի գրասենյակում կայացել է Իջեւանի դենդրոպարկի տարածքի երկրորդ մասի՝ 5,7 հեկտարի՝ վարձակալության տրամադրելու մրցույթ, որում հաղթել է Իջեւանի գինու, կոնյակի գործարանը: Այդ գործարանի մեղքով դենդրոպարկի այդ հատվածը զրկվել է կես հեկտար տարածքից, գետի վարարած հոսանքը այդ կես հեկտարը քշել տարել է, քանզի գինու, կոնյակի գործարանը ինքնակամ, ապօրինի շինարարությամբ փոխել է Աղստեւի հունը: 2023թ. փետրվարի 2-ին «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրեն Լեւոն Գաբրիելյանի եւ Իջեւանի գինու, կոնյակի գործարանի միջեւ կնքվել է վարձակալության պայմանագիր, 5,7 հա տարածքը, որը դենդրոպարկի մաս է, հատկացվել է գինու, կոնյակի գործարանին հանգստի գոտու վերածելու նպատակով: Լեւոն Գաբրիելյանի աշխատանքային պայմանագրի ժամկետն ավարտվել է 2023թ. մարտի 9-ին, նրան այդ պաշտոնում փոխարինել է ( ըստ լուրերի՝ շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմիդյանի ընկեր) Լեւոն Տեր-Սիմոնյանը, որը 2023թ.-ին նշանակվել է այդ ՊՈԱԿ-ի փոխտնօրեն: Իջեւանի դենդրոպարկի երկարամյա տնօրեն Մեխակ Սայադյանը տեղյակ չի եղել հայտարարված մրցույթից եւ կնքված պայմանագրից: Նա այդ մասին տեղեկացել է «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրինության կողմից՝ կատարվածից մեկ ամիս անց: Մ. Սայադյանը տեղյակ չէ, թե ինչ կլինի դենդրոպարկի աշխատողների խնդիրը:

Մինչեւ հիմա իրավապահ մարմինների կողմից չեն գնահատվել Իջեւանի գինու, կոնյակի գործարանի կողմից Աղստեւ գետում ինքնակամ շինարարության հետեւանքով դենդրոպարկին հասցված հսկայական վնասների չափերը, ծառայգում չորացել են 1500-ից ավելի հազվագյուտ ծառեր ու թփեր, որոնցից մոտ 250 տեսակը դենդրոպարկում արդեն վերացել է: Գինու, կոնյակի գործարանի պատնեշած տարածքում այժմ ինչ-որ շինություններ են կառուցում (ըստ Իջեւանի բնակիչների) այդտեղ վայրի կենդանիներ պահելու համար: «Ժողովուրդ» օրաթերթը գրավոր հարցում է ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահ Արգիշտի Քյարամյանին: Քննչական կոմիտեից ստացած պատասխանում նշված է, որ Աղստեւ գետի մաս հանդիսացող ջրային հողն առանց ՀՀ ջրային կոմիտեի եզրակացության վարձակալությամբ Իջեւանի գինու, կոնյակի գործարանին հանձնելու եւ ապօրինի շինարարություն կատարելու դեպքի առթիվ 2021թ. հոկտեմբերի 15-ին ՀՀ քրեական օրենսգրքի 308 հոդվածի 1-ին մասով եւ 290 հոդվածի 1-ին մասով քրեական գործ է հարուցվել, նախաքննության ներկա փուլում որեւէ մեկի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցված չէ: Իջեւանի գինու, կոնյակի գործարանն առանց շինթույլտվության հենապատ կառուցելու համար 2021թ. մարտի 29-ին տուգանվել է 200 հազար դրամի չափով: Գործարանը դրանից հետո շարունակել է կառուցապատումը, եւ 2021թ. հուլիսի 14-ին երկրորդ անգամ է ենթարկվել վարչական պատասխանատվության՝ 2 միլիոն 500 հազար դրամի չափով:

*ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*
*Տավուշ*

ՀՐԱԴԱԴԱՐԸ ՉԻ ՊԱՀՊԱՆՎՈՒՄ

# ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆՈՐ ԶԵԿՈՒՅՑԸ

**2020 թ.-ի 44-օրյա պատերազմից հետո կնքված հրադադարը չի պահպանվում, ավելին՝ հրադադարը մի քանի անգամ խախտվել է՝ հանգեցնելով հարյուրավոր զոհերի եւ Ադրբեջանի զորքերի կողմից Հայաստանի արեւելքում ու հարավ-արեւելքում երկրի ինքնիշխան տարածքի բռնազավթման:**



Այս մասին նշվում է Եվրոպական խորհրդարանի զեկույցում՝ ԵՄ-Ադրբեջան հարաբերությունների վերաբերյալ:

Փաստաթղթում հիշատակվում են Լաչինի միջանցքով քաղաքացիական երթեւեկության արգելափակումը, սեպտեմբերյան մարտերի ժամանակ ռազմագերիների խոշտանգումները, 2020 թ.-ին եւ 2021 թ.-ի սկզբին քաղաքացիական անձանց, այդ թվում՝ տարեցների նկատմամբ ոտնձգությունները եւ արտադատական հաշվեհարդարները:

«ԵՄ-ն պատրաստ է ակտիվ դերակատարում ունենալ՝ որպես հուսալի առեւտրային գործընկեր եւ արդար միջնորդ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ կայուն խաղաղություն հաստատելու գործում՝ իր գործողությունները հիմնելով ժողովրդավարությունը, օրենքի գերակայությունը եւ մարդու իրավունքների հանդեպ հարգանքն առաջ մղելու վրա»,- նշում են զեկույցի հեղինակները՝ հավելելով, որ Ուկրաինայում Ռուսաստանի ծավալած հակամարտությունն ազդեցություն է ունեցել Հարավային Կովկասի վրա եւ էլ ավելի է բարդացրել տարածաշրջանի անվտանգային իրավիճակը:

Զեկույցում անդրադարձ է կատարվում նաեւ հարաբերությունների կարգավորման Ադրբեջանի առաջարկած հինգ սկզբունքներին եւ դրանց առնչությամբ Հայաստանի արձագանքին:

Փաստաթղթում նաեւ հիշատակվում է Արդարադատության միջազգային դատարանի՝ 2021 թ. դեկտեմբերի 7-ի որոշումը՝ կապված Լեռնային Ղարաբաղի մշակութային ժառանգության ոչնչացման գործում Ադրբեջանի իշխանությունների ներգրավվածության հետ:

Զեկույցում նշվում է, որ Լեռնային Ղարաբաղի շուրջ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հակամարտությունը մեծապես խոչընդոտել է Հարավային Կովկասի տարածաշրջանի զարգացումն ու կայունությունը եւ ավելի լայն իմաստով ազդում է Եվրոպական կայունության վրա:

«Եվրոպական խորհրդարանը խստորեն դատապարտում է 2022 թ.-ի սեպտեմբերին Հայաստանի ինքնիշխան տարածքում բազմաթիվ թիրախների դեմ լայնածավալ ռազմական ագրեսիան... դատապարտում է ռազմական ներխուժումները, որոնք 2021 թ.-ի մայիսից ի վեր իրականացվել են չսահմանազատված սահմանով, բոլոր ուժերին կոչ է անում վերադառնալ իրենց ելման դիրքեր, դատապարտում է խաղաղության գործընթացը խաթարող ցանկացած փորձ եւ բոլոր կողմերին կոչ է անում զերծ մնալ ուժի կիրառումից», - նշված է զեկույցում:

Եվրոպական խորհրդարանը նաեւ մտահոգություն է հայտնում Ադրբեջանում պահվող հայ գերիների ճակատագրի առնչությամբ, դատապարտում է Բաքվում, այսպես կոչված, «Ռազմավարների զբոսայգու» բացումը, ողջունում է Հայաստանում ԵՄ քաղաքացիական առաքելություն տեղակայելու շուրջ համաձայնագիրը եւ խրախուսում է Հայաստանի եւ Ադրբեջանի քաղաքական ղեկավարությունների միջեւ երկկողմ շփումները:

Միեւնույն ժամանակ նշվում է, որ Ադրբեջանի հետ քաղաքական եւ էներգետիկ ոլորտում գործընկերությունը խորացնելուց առաջ Ադրբեջանը պետք է բարելավի մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների հետ կապված իրավիճակը, որը «դեռ գնահատվում է շատ բացասական»: Անդրադարձ է կատարվում նաեւ Ադրբեջանում առկա կոռուպցիային, կանանց դեմ բռնություններին, խոսքի ազատության սահմանափակումներին:

ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ Է

# ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՒՄ՝ ԱՌԱՆՑ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ

**ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հետաքննության եւ օպերատիվ հետախուզության վարչությունը շարունակում է հարկային իրավախախտումների եւ տնտեսական հանցագործությունների դեմ պայքարը: Օրերս բացահայտվել է առանց ընդերքօգտագործման թույլտվության ավազի արդյունահանում իրականացնելու դեպք:**

Հետաքննության եւ օպերատիվ հետախուզության վարչություն օպերատիվ տվյալներ էին ստացվել այն մասին, որ Արմավիրի մարզում առանց լիցենզիայի իրականացվում է ավազի արդյունահանում:

Ստացված օպերատիվ տվյալներն իրացնելու նպատակով ՊԵԿ հետաքննության եւ օպերատիվ հետախուզության վարչության Արմավիրի բաժնի աշխատակիցները ձեռնարկել են օպերատիվ-հետախուզական լայնածավալ միջոցառումներ՝ պարզելու տվյալ անձանց ինքնությունը, շրջանակը, ինչպես նաեւ գործունեության իրականացման վայրը: Շուրջօրյա ռեժիմով իրականացված ուժեղացված օպերատիվ հսկողության շնորհիվ՝ նշված միջոցառումներն իրենց դրական արդյունքն են տվել:

Արմավիրի մարզի բնակիչ Ռ.Մ.-ն, չունենալով պետական գրանցում եւ ընդերքօգտագործման թույլտվություն, Արմավիր մարզի Նալբանդյան համայնքի վարչական տարածքում գտնվող ավազակոպճային հանքից արդյունահանել եւ իրեն պատկանող բեռնատարով մեկ այլ տարածք է տեղափոխել ավազակոպճային զանգված եւ ստացել ձեռնարկատիրական եկամուտ: Պարզվել է նաեւ, որ 2023 թվականի փետրվար ամսին, ընդհանուր առմամբ, քաղաքացու կողմից այդ նույն տարածքից արդյունահանվել եւ տեղափոխվել է մոտ 150 խորանարդ մետր ավազակոպճային զանգված, ինչի հետեւանքով պետությանը պատճառվել է խոշոր չափի վնաս:

Դեպքի առթիվ նախապատրաստվել են նյութեր, որոնք ուղարկվել են ՀՀ քննչական կոմիտե, որտեղ, ՀՀ քրեական օրենսգրքի 281-րդ հոդվածի հատկանիշներով, նախաձեռնվել է քրեական վարույթ: Միաժամանակ նյութերն ուղարկվել են ՀՀ պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչություն ՀՀ հարկային օրենսգրքի 407-րդ հոդվածի հատկանիշներով վարչական վարույթ իրականացնելու նպատակով:

ՊԵԿ հետաքննության եւ օպերատիվ հետախուզության վարչությունը հորդորում է զերծ մնալ առանց պետական գրանցման եւ համապատասխան լիցենզիայի գործունեություն իրականացնելուց:

*● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 14 ՃՏՊ. 1 մարդ զոհվել է, 21-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (2)

**Աճուրդ-վաճառք**

«Սյունիք Ֆուդ» ՍՊԸ-ին պատկանող շարժական գույքը հրապարակային սակարկություններով (աճուրդ) վաճառելու մասին

«Սյունիք Ֆուդ» ՍՊԸ (Պարտապան) սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանի կողմից 24.03.2023 թվականին ժամը 15:00-ին ք. Երեւան, Ադոնցի 6/1, 303 հասցեում կանցկացվի Պարտապանին սեփականության իրավունքով պատկանող հետեւյալ գույքի (արագ փչացող ապրանքներ (պահածոներ)) հրապարակային սակարկություններով վաճառքը հետեւյալ լոտերով.

Լոտ 13 - կոմպոտ 1լ - 7,714 հատ (ժամկետի մեջ), գինը՝6,171,200 ՀՀ դրամ,

Լոտ 14 -կոմպոտ, հյութ 0.25լ - 5,155 հատ (ժամկետի մեջ), գինը՝1,288,750 ՀՀ դրամ,

Լոտ 15 -պահածոյացված բանջարեղեն 0.45լ - 4,329 հատ (ժամկետի մեջ), գինը՝ 3,030,300 ՀՀ դրամ,

Լոտ 16 -տոմատ 0.45լ - 608 հատ (ժամկետի մեջ), գինը՝364,800 ՀՀ դրամ,

Լոտ 17 -պահածոյացված բանջարեղեն 0.58լ - 9,508 հատ (ժամկետի մեջ), գինը՝ 8,081,800 ՀՀ դրամ,

Լոտ 18 -պահածոյացված բանջարեղեն 0.72լ - 580 հատ (ժամկետի մեջ), գին՝ 464,000 ՀՀ դրամ,

Լոտ 19 - մուրաբա 0.212լ - 19,888 հատ (ժամկետի մեջ), գինը՝8,949,600 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

ա/ ֆիզիկական անձանց դեպքում՝ անձնագրի պատճենը,

բ/ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ դրանց պետական գրանցում հավաստող փաստաթղթերի պատճենները,

գ/ աճուրդի մասնակցության վճարի եւ նախավճարի վճարումները հավաստող փաստաթղթերը (անդորրագրերը):

Աճուրդում ներկայացված բոլոր գույքերի վրա առկա են «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված սահմանափակումներ եւ հանդիսանում են գրավի առարկա (գրավի իրավունքը վիճարկվում է):

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք աճուրդին մասնակցելու համար կարող են աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ներկայացնել ՀՀ սնանկության դատարան սույն հայտարարությունը հրապարակվելուց հետո մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ն ընկած ժամանակահատվածում:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք վճարում են մասնակցության վճար եւ նախավճար, որոնք կազմում են տվյալ լոտի մեկնարկային գնի համապատասխանաբար 1 (ոչ ավել քան 10,000 ՀՀ դրամը) եւ 5 տոկոսները: Մասնակցության վճարը եւ նախավճարը ենթակա են վճարման «Արդշինբանկ» ՓԲԸ-ում բացված «Սյունիք Ֆուդ» ՍՊԸ սնանկության թիվ 2480102735840000 հատուկ հաշվին՝ մինչեւ աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ՀՀ սնանկության դատարան ներկայացնելը:

Սույն հայտարարությամբ նախատեսված աճուրդի օրը կարող է փոխվել եւ/կամ հետաձգվել՝ այդ մասին աճուրդի օրվանից ոչ պակաս երեք օր առաջ համապատասխան հայտարարություն կատարելու միջոցով:

Աճուրդն անցկացվելու է բաց դասական (գնի ավելացման) եղանակով, հետեւաբար աճուրդում հաղթող է համարվում առավել բարձր գին վճարող մասնակիցը:

Աճուրդում հաղթող ճանաչվելու դեպքում, լոտի արժեքը ենթակա է վճարման աճուրդն անցկացնելու օրվանից 10 (տասը) օրյա ժամկետում սնանկության հատուկ հաշվին լոտի գնման գինը՝ հաշվանցելով նախօրոք վճարած նախավճարը:

Աճուրդում հաղթող համարվող անձի հետ առուվաճառքի պայմանագրի կնքման, դրանից ծագող իրավունքների պետական գրանցման, գույքը գնորդին փոխանցելու եւ պայմանագրից բխող բոլոր անհրաժեշտ ծախսերը ենթակա են կատարման աճուրդում հաղթող համարվող անձի կողմից:

Աճուրդի անցկացման, լոտի ծանոթացման եւ ուսումնասիրության համար դիմել սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանին (հեռ.՝ 060 500 250, էլ. փոստ՝ makar.yeg@gmail.com)՝ աշխատանքային օրերին 11:00-16:00-ն ընկած ժամանակահատվածում:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (1)

**Հրապարակային սակարկություններով վաճառք**

«Ատաստ Ֆուդ» ՍՊԸ-ին պատկանող՝ ստորեվ նշված շարժական եվ անշարժ գույքերը հրապարակային սակարկություններով (աճուրդ) վաճառելու մասին

«ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանի կողմից 13.04.2023 թվականին ժամը 15:00-ին ք. Երեւան, Ադոնցի 6/1, 303 հասցեում կանցկացվի ՀՀ Սնանկության դատարանի թիվ ՍնԴ/0888/04/21 սնանկության գործով 24.05.2021 թվականին կայացված վճռով սնանկ ճանաչված «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի ստորեւ նշված շարժական եւ անշարժ գույքերի հրապարակային սակարկություններով վաճառքը հետեւյալ լոտերով.

Լոտ 1 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված, եւՏարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Վարսեր համայնքի տարածք հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝2480935:

-Մեկնարկային գին՝ 2,754,990 ՀՀ դրամ:

Լոտ 2 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Սեւան, հյուսիս արեւմտյան մաս, «Իշխան» ռեստորանի հյուսիս արեւմուտք հողատարածք հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝ 2161076:

-Մեկնարկային գին՝2,219,298 ՀՀ դրամ:

Լոտ 3 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Աղբերք համայնք, փող. 13, հողամաս 11 բնակավայրի հող հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝2626848:

-Մեկնարկային գին՝956,594 ՀՀ դրամ:

Լոտ 4 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված, եւ Անուշ Միլիտոսի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Ծործա համայնք բնակավայրի հող հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝ 2140468:

-Մեկնարկային գին՝803,539 ՀՀ դրամ:

Լոտ 5 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Մարտունի, Մյասնիկյան 3 նրբ., թիվ 24,26 հասցեում գտնվող տնամերձ հողամաս անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝2290379:

-Մեկնարկային գին՝1,171,827 ՀՀ դրամ:

Լոտ 7 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Ազատության 57/21 բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝ 2430110:

-Մեկնարկային գին՝3,539,397 ՀՀ դրամ:

Լոտ 9 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Արարատի Մարզ, Մասիս համայնքում գյուղնշանակության հողամաս հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝2183736:

-Մեկնարկային գին՝1,066,603 ՀՀ դրամ:

Լոտ 10 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս կողմից իր պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված «FORD» մակնիշի, TRANZIT 2.4 TD տիպարի, 2000թ. արտադրության, 104 PP 11 պետհամարանիշով, կարմիր գույնի, բեռնատար տեսակի ավտոմեքենան (նույնացման համար՝ WF0LXXGBFLYC10424, գտնվելու վայրը՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գյուղ Վերին Գետաշեն, Բ թաղամաս, 2-րդ փողոց, 12):

-Մեկնարկային գին՝1,179,001 ՀՀ դրամ:

Լոտ 11 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս կողմից իր պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված «MITSUBISHI» մակնիշի, MONTERO SPORT 3.0 տիպարի, 2000թ. արտադրության, 104 LL 11 պետհամարանիշով, ս– գույնի, ունիվերսալ տեսակի ավտոմեքենան (նույնացման համար՝ JA4LS21HXYP038422, գտնվելու վայրը՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գյուղ Վերին Գետաշեն, Բ թաղամաս, 2-րդ փողոց, 12):

- Մեկնարկային գին՝813,105 ՀՀ դրամ:

Լոտ 12 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված Sharp սառնարան (տեխնիկական վիճակը՝բավարար)

-Մեկնարկային գին՝ 34,020 ՀՀ դրամ:

Լոտ 19 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված կաթսայատուն ընդհ. (տեխնիկական վիճակը՝բավարար)

-Մեկնարկային գին՝ 255,150 ՀՀ դրամ:

Լոտ 20 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված լվացման հոսքագիծ (տեխնիկական վիճակը՝անսարք)

-Մեկնարկային գին՝226,800 ՀՀ դրամ:

Լոտ 26 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված միրգ տրորող սարք (տեխնիկական վիճակը՝բավարար)

-Մեկնարկային գին՝28,350 ՀՀ դրամ:

Լոտ 27 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված ջարդիչ (տեխնիկական վիճակը՝ անսարք)

-Մեկնարկային գին՝19,845 ՀՀ դրամ:

Լոտ 32 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված թրթուրավոր շղթա (տեխնիկական վիճակը՝բավարար)

-Մեկնարկային գին՝68,040 ՀՀ դրամ:

Լոտ 35 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված հյութ լցնող սարք (տեխնիկական վիճակը՝բավարար)

-Մեկնարկային գին՝85,050 ՀՀ դրամ:

Լոտ 36 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված լաբորատոր սարք (տեխնիկական վիճակը՝բավարար)

-Մեկնարկային գին՝28,350 ՀՀ դրամ:

Լոտ 37 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված ավտոկլավ փոքր երկու հատ (տեխնիկական վիճակը՝բավարար)

-Մեկնարկային գին՝73,710 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

ա/ ֆիզիկական անձանց դեպքում՝ անձնագրի պատճենը,

բ/ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ դրանց պետական գրանցում հավաստող փաստաթղթերի պատճենները,

գ/ աճուրդի մասնակցության վճարի եւ նախավճարի վճարումները հավաստող փաստաթղթերը (անդորրագրերը):

Աճուրդում ներկայացված բոլոր գույքերի վրա առկա են «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված սահմանափակումներ եւ հանդիսանում են գրավի առարկաներ:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք աճուրդին մասնակցելու համար կարող են աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ներկայացնել ՀՀ սնանկության դատարան սույն հայտարարությունը հրապարակվելուց հետո մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ն ընկած ժամանակահատվածում:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք վճարում են մասնակցության վճար եւ նախավճար, որոնք կազմում են տվյալ լոտի մեկնարկային գնի համապատասխանաբար 1 (ոչ ավել քան 10,000 ՀՀ դրամը) եւ 5 տոկոսները: Մասնակցության վճարը եւ նախավճարը ենթակա են վճարման «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ սնանկության գործով թիվ 2480102725520000 «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ հատուկ հաշվին՝ մինչեւ աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ՀՀ սնանկության դատարան ներկայացնելը:

Սույն հայտարարությամբ նախատեսված աճուրդի օրը կարող է փոխվել եւ/կամ հետաձգվել՝ այդ մասին աճուրդի օրվանից ոչ պակաս երեք օր առաջ համապատասխան հայտարարություն կատարելու միջոցով:

Աճուրդն անցկացվելու է բաց դասական (գնի ավելացման) եղանակով, հետեւաբար աճուրդում հաղթող է համարվում առավել բարձր գին վճարող մասնակիցը:

Աճուրդում հաղթող ճանաչվելու դեպքում, լոտի արժեքը ենթակա է վճարման աճուրդն անցկացնելու օրվանից 10 (տասը) օրյա ժամկետում սնանկության հատուկ հաշվին լոտի գնման գինը՝ հաշվանցելով նախօրոք վճարած նախավճարը:

Աճուրդում հաղթող համարվող անձի հետ առուվաճառքի պայմանագրի կնքման, դրանից ծագող իրավունքների պետական գրանցման, գույքը գնորդին փոխանցելու եւ պայմանագրից բխող բոլոր անհրաժեշտ ծախսերը ենթակա են կատարման աճուրդում հաղթող համարվող անձի կողմից:

Աճուրդի անցկացման, լոտի ծանոթացման եւ ուսումնասիրության համար դիմել սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանին (հեռ.՝ 060 500 250, էլ. Փոստ՝ makar.yeg@gmail.com)՝ աշխատանքային օրերին 11:00-16:00-ն ընկած ժամանակահատվածում:

## ԳՆԵՐԻ ՏԱՏԱՆՈՒՄՆԵՐ

# ՄՊՀ-Ն ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼ Է ՇՈՒԿԱՆ

**Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը 2022 թվականին հինգ առանցքային շուկաների շարքում ուսումնասիրել է բուսական յուղի շուկան: Ուսումնասիրությունն իրականացվել է «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետ համատեղ՝ նպատակ ունենալով ներգրավել նաեւ գիտական ներուժը: «Ամբերդ» հետազոտական կենտրոնը ուսումնասիրության շրջանակում օգնել է իրականացնել հնարավոր կանխատեսումներ եւ գնահատել միջազգային եւ տեղական շուկաների ապագա տենդենցները: Հանձնաժողովը գնահատել է իրացման բոլոր շղթաներում տնտեսավարողների վարքագիծը եւ վեր հանել շուկայում առկա մրցակցային խնդիրները:**

Համաձայն ուսումնասիրության արդյունքների՝

-վերջին տասը տարիների ընթացքում բուսական յուղի համաշխարհային պահանջարկը ավելացել է շուրջ 40 %-ով: Կտրուկ աճ է գրանցել որպես բիովառելիք բուսական յուղի օգտագործումը՝ միջին տարեկան աճը կազմել է 21.4 %:

- Բուսական յուղի արտադրությամբ զբաղվող առաջատար խոշոր երկրներն են Ինդոնեզիան, Չինաստանը եւ Մալայզիան, որոնք 2021 թ.-ին միասին ապահովել են բուսական յուղի համաշխարհային արտադրության շուրջ 47.4 %-ը: Խոշոր արտադրողներ են հանդիսանում նաեւ ԱՄՆ-ն, Ուկրաինան եւ Ռուսաստանի Դաշնությունը:

- ՀՀ-ում բուսական յուղն ամբողջությամբ ներմուծվում է եւ օգտագործվում սննդային նպատակով: 2021 թվականին արեւածաղկի եւ եգիպտացորենի բուսական յուղերի ընդհանուր ներմուծումն իրականացվել է շուրջ 100 տնտեսավարողի կողմից՝ կազմելով շուրջ 25,5 հազար տոննա, ներմուծումների 98 %-ն իրականացվել է ՌԴ-ից:

- Իրացման առավել խոշոր ծավալներ ունեցող առաջատար 3 տնտեսավարող սուբյեկտների մասնաբաժինները շուկայում գրեթե հավասար են եղել: Նրանց մասնաբաժինների հանրագումարը 2020թ.-ին կազմել է 64,1%, իսկ 2021 թվականին՝64,6%:

- 2020-2021 թվականներին ՀՀ-ում բուսական յուղի իրացման գների տատանումները հիմնականում համահունչ են եղել համաշխարհային գների տատանումներին:

- Սուպերմարկետների կողմից կիրառվող գնային քաղաքականության շրջանակներում նշմարվել են որոշակի ուղղություններ, որոնք կարող են մրցակցային խնդիրներ առաջացնել, ինչից ելնելով՝ հանձնաժողովը հարուցել է վարչական վարույթ հնարավոր խնդիրներն առավել ամբողջական ուսումնասիրելու եւ բացահայտելու նպատակով:

*●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

# ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԵԼ Է ՀԱՅ ԿԻՆՈՅԻ 100-ԱՄՅԱԿԸ

**Ֆրանսիայի «Սինեմատեք»-ի հովանու ներքո «Աշխարհի ողջ հիշողությունը» վերականգնված եւ արխիվային ֆիլմերի միջազգային հոբելյանական 10-րդ փառատոնի շրջանակում մարտի 10-ին եւ 11-ին անցկացվել է «Համո Բեկնազարյան. Հայ կինոյի ռահվիրան» հետահայաց ծրագիրը: Ինչպես ArmLur.am-ին տեղեկացրին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունից, ծրագրի շրջանակում կայացել են «Տունը՝ հրաբխի վրա» (1928 թ.), «Երկիր Նաիրի» (1930 թ.) եւ «Դուստրը» (1942 թ.) ֆիլմերի վերականգնված տարբերակների միջազգային պրեմիերաները:**




«Սույն ցուցադրությամբ մեկնարկել է Հայ կինոյի 100-ամյակին նվիրված պետական միջոցառումների ծրագիրը, որն իրականացվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ:

Բացման խոսքով հանդես է եկել օսկարակիր ռեժիսոր, «Սինեմաթեք»-ի նախագահ Կոստա Գավրասը: Ցուցադրությանը ներկա էր Ֆրանսիայում Հայաստանի դեսպան Հասմիկ Տոլմաջյանը: Դեսպանն իր ելույթում երախտագիտություն է հայտնել հայկական կինոարվեստին ցուցաբերված ուշադրության եւ գնահատանքի համար: Նա բարձր է գնահատել Ֆրանսիայի «Սինեմատեք»-ի եւ Հայաստանի ազգային կինոկենտրոնի միջեւ հաստատված համագործակցությունը՝ ընդգծելով հետագա գործակցության ընդլայնման կարեւորությունը: Ցուցադրությանը ներկա է եղել հայաստանյան պատվիրակությունը՝ Հայաստանի ազգային կինոկենտրոնի տնօրեն Շուշանիկ Միրզախանյանի գլխավորությամբ»,- ասվում է հաղորդագրության մեջ:

Փառատոնի ծրագրում այս տարի ցուցադրվում են համաշխարհային կինոյի մեծ վարպետների 85 ֆիլմեր, այդ թվում՝ նաեւ Լեո Կարաքսի, Ջիգա Վերտովի, Օթար Իոսելիանիի ֆիլմերը: Նշվում է, որ Ֆրանսիայի «Սինեմատեք»-ի հովանու ներքո մարտի 8-12-ն անցկացվող «Աշխարհի ողջ հիշողությունը» վերականգնված եւ արխիվային ֆիլմերի համաշխարհային կինոժառանգության այս հեղինակավոր կինոփառատոնին Հայաստանը մասնակցում է առաջին անգամ:

Համո Բեկնազարյանին նվիրված այս ծրագրով անվանի ռեժիսորի ստեղծագործությունն առաջին անգամ է հանրայնացվում Ֆրանսիայում 1993 թվականին «Պոմպիդու» կենտրոնում անցկացված հայ կինոյի հետահայաց ծրագրից հետո: Ըստ աղբյուրի՝ Համո Բեկնազարյանի երեք ֆիլմերի վերականգնումն իրականացվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ, Հայաստանի ազգային կինոկենտրոնի միջոցով: Ֆիլմերի թվայնացման եւ մասնագիտական վերականգնման աշխատանքները կատարվել են Հայաստանում One Man Studio Production-ի մասնագետների, Հայաստանի ազգային արխիվի, Հայաստանի հանրային հեռուստաընկերության մասնակցությամբ:

ԼՈՒՐԵՐ

## ՈՐՄՆԱՆԿԱՐՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատմության եւ մշակույթի մոնումենտալ հուշարձանների պահպանության հետ կապված խնդիրների, գիտանախագծային փաստաթղթերի քննարկման, խորհրդակցման եւ որոշումների կայացման նպատակով ձեւավորված աշխատանքային խմբի 2023թ. անդրանիկ նիստը կայացել է արտագնա ձեւաչափով՝ Էրեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարանում: ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատմության եւ մշակույթի հուշարձանների պահպանության վարչության աշխատակիցների ու աշխատանքային խմբի անդամների այցի նպատակը թանգարանի տնօրենության հետ Էրեբունի պատմահնագիտական արգելոցի տարածքում գտնվող խորհրդային ժամանակաշրջանում վերստեղծված որմնանկարների տեխնիկական գնահատումը եւ դրանց հետագա պահպանության (մաքրման, ամրակայման) համար հնարավոր լուծումներ գտնելն էր: Համատեղ քննարկման արդյունքում որոշվել է որմնանկարների լավ պահպանված հատվածներն ամրակայել եւ կոնսերվացնել՝ հնարավորինս զերծ մնալով նոր միջամտություններից: Նիստի օրակարգային հարցերից էր նաեւ ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, գեղանկարիչ Հակոբ Հակոբյանի «Սարերում» որմնանկարի տեղափոխության հարցը: ՀՀ կառավարության որոշմամբ՝ 2016թ. որմնանկարն անհատույց եւ անժամկետ օգտագործման իրավունքով ամրացվել է «Գյումրու Վ. Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ-ին, որտեղ որմնանկարի պահպանության համար պատշաճ պայմաններ չլինելու պատճառով անհրաժեշտություն է առաջացել վերջինս թատրոնից տեղափոխել մեկ այլ՝ ավելի բարենպաստ վայր: Հարկ է նշել, որ Գյումրու Վ. Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոնի շենքը 2019թ. նախարարության փորձագիտական հանձնաժողովի կողմից ճանաչվել է պատմության եւ մշակույթի տեղական նշանակության նորահայտ հուշարձան:

## «ՅՈՒՆԻԲԱՆԿ»-Ը ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի գումարման մասին հայտարարություն

2023 թվականի մարտի 31-ին գումարվելու է «ՅՈՒՆԻԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով համատեղ ներկայության կարգով իրական ժամանակի ռեժիմում Zoom հավելվածի միջոցով:

«Յունիբանկ»-ը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

Տեղեկատու կենտրոն՝ + 374 10 59 55 55:

ՆԱԽԱԳԻԾ

# ԱԶՆԱՎՈՒՐԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԸ՝ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

**Երեւան քաղաքի Ֆրանսիայի հրապարակում կտեղադրվի Հայաստանի ազգային հերոս, երգիչ, երգահան, հասարակական գործիչ Շառլ Ազնավուրի հիշատակը հավերժացնող հուշարձանը: Երեւան քաղաքի ավագանու հերթական նիստին «Շառլ Ազնավուրի հիշատակը հավերժացնող հուշարձանի տեղադրմանը համաձայնություն տալու մասին» նախագիծը ներկայացրեց Երեւանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Ավինյանը՝ հավելելով, որ հուշարձանի կրկնօրինակը տեղադրվելու է նաեւ Փարիզում:**



Ավինյանը հայտնեց, որ, Շառլ Ազնավուրի ծննդյան 100-ամյակին ընդառաջ, «Ազնավուր» հիմնադրամը առաջարկել է Երեւան քաղաքում տեղադրել Շառլ Ազնավուրի հուշարձանը:

Ըստ քաղաքապետի տեղակալի՝ քննարկումների արդյունքում առաջարկվել է հուշարձանը տեղադրել Ֆրանսիայի հրապարակի կենտրոնական հատվածում: «Հաշվի առնելով, որ ունենք այնտեղ նաեւ Օգյուստ Ռոդենի՝Ժյուլ Բաստիեն Լեպաժի արձանի տեղափոխման հարցը ավելի տեսանելի եւ դիտարկելի հատված, առաջարկվեց Շառլ Ազնավուրի արձանը տեղադրել հենց Ֆրանսիայի հրապարակի կենտրոնական հատվածում, իսկ Օգյուստ Ռոդենի՝Ժյուլ Բաստիեն Լեպաժի արձանը տեղափոխել նույն հրապարակի մայթեզրին ավելի մոտ հատված: Բացի այս, ներկայումս քանդակի՝ Ֆրանսիայի հրապարակի կենտրոնում տեղադրված լինելու հանգամանքը հանրությանը թույլ չի տալիս պատշաճ կերպով դիտել կամ ուսումնասիրել մեծարժեք ստեղծագործությունը, ինչը եւս նախատեսված է քանդակի նվիրատվության պայմանագրով»,- ասաց Ավինյանը:

Կարեւորելով աշխարհահռչակ հայազգի արվեստագետի, մեծ մարդասերի, հասարակական գործչին ըստ արժանվույն գնահատելու, ստեղծագործական ժառանգության արժեւորման եւ հանրահռչակելու, նրա հիշատակը հավերժացնելու անհրաժեշտությունը՝ Ավինյանն առաջարկեց ընդունել որոշման նախագիծը: Նախագծին քվեարկեց ավագանու 49 անդամ, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0: Սույն որոշման ընդունումից հետո կիրականացվեն հուշարձանի էսքիզային եւ ճարտարապետական նախագծերի հաստատման հետ կապված աշխատանքները:

*● Մարտի 17-ին Խամաճիկների պետական թատրոնում տեղի կունենա «Փոքրիկ իշխանը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝1500 դրամ: Սկիզբը՝ժամը 17:00-ին:*

# ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

## ՎԱՐԿԵՐ

**ՀԱՐՑ. Վարկային պայմանագրի շրջանակներում հանդիսանում եմ երաշխավոր: Վարկառուն (վարկ վերցրած անձը) վճարումները չի կատարում ժամանակին: Հիմա ես չեմ ցանկանում լինել երաշխավոր, ի՞նչ կարող եմ անել:**

*Ժասմենա Հարությունյան (37 տարեկան)*




**ՊԱՏԱՍԽԱՆ.** Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ տվյալ պարագայում երաշխավորությունը կարող է դադարել վարկառուի եւ ֆինանսական կազմակերպության միջեւ ձեռք բերված համաձայնությամբ, ինչպես նաեւ օրենքով նախատեսված դեպքերում, ինչի կապակցությամբ ցանկանում ենք նշել հետեւյալը. երաշխավորը, երաշխավորության պայմանագրով, այլ անձի պարտատիրոջ առջեւ պարտավորվում է պատասխանատվություն կրել այդ անձի կողմից իր պարտավորությունը լրիվ կամ մասնակի կատարելու համար: Վարկառուի հետ լինելով համապարտ պարտապան վարկառուի կողմից վարկային պայմանագրով ստանձնած վարկային պարտավորությունների համար՝ երաշխավորը նույնպես պատասխանատվություն է կրում վարկային պարտավորությունների կատարման համար: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորությունը կատարած երաշխավորին են անցնում այդ պարտավորությամբ պարտատիրոջ իրավունքները եւ պարտատիրոջ՝ որպես գրավառուի պատկանող իրավունքներն այն ծավալով, որով երաշխավորը բավարարել է պարտատիրոջ պահանջը:

***Ֆինանսական համակարգի հաշտարար***

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Նշենք, որ վարկառուի կողմից վարկային պայմանագրից բխող վճարումները չկատարվելու կամ անպատշաճ կերպով կատարվելու դեպքում վարկատուն (բանկը կամ այլ վարկային կազմակերպությունը) կարող է իր պահանջները ներկայացնել ինչպես պարտապանին, այնպես էլ երաշխավորներին կամ նրանցից յուրաքանչյուրին, եթե երաշխավորի սուբսիդիար պատասխանատվություն նախատեսված չէ օրենքով կամ երաշխավորության պայմանագրով:

## ԿՐԹԱԿԱՆ

**ՀԱՐՑ. Մրցութային հավասար միավորների դեպքում ո՞ր դիմորդներին է տրվում առավելություն:**

*Միեր Հայրապետյան (27 տարեկան)*



**ՊԱՏՍԽԱՆ.** Մրցութային հավասար միավորների դեպքում, ըստ հերթականության, առավելություն է տրվում՝

1) բոլոր տարիների մեդալակիր դիմորդներին,

2) արվեստի գծով միջազգային եւ հանրապետական մրցույթների հաղթողներին,

3) դպրոցականների հանրապետական առարկայական օլիմպիադաների առաջին կարգի դիպլոմ ստացած դիմորդներին,

4) Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության բուհերի առկա ուսուցմամբ տվյալ ուսումնական տարվա մասնագիտությունների եւ ընդունելության քննությունների ցանկում բուհի կողմից նշված առաջին մրցութային քննությունից առավել բարձր միավոր ստացած դիմորդներին,

5) դպրոցի պետական ավարտական քննություններից առավելագույն միջին գնահատական ունեցող դիմորդներին,

6) տվյալ մասնագիտությանը համապատասխան միջին մասնագիտական կրթություն ստացած դիմորդներին:

***ՀՀ կրթության, գիտության, սպորտի եւ մշակույթի նախարարություն***

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Ուսանողի տեղափոխությունը թույլատրվում է, եթե տեղափոխման պահին ուսումնառած ծրագրի եւ ընդունող ծրագրի բովանդակությունների տարբերությամբ պայմանավորված՝ առարկայական տարբերությունների թիվը չի գերազանցում 20 կրեդիտը:

## ԼՈՒՐ ԿԱԴՐ

*Լուսանկարն արվել է Բուխարեստում*



Հունահռոմեական ոճի ըմբիշ Կարապետ Մանվելյանն արծաթե մեդալ է նվաճել Ռումինիայի մայրաքաղաք Բուխարեստում ընթացող Եվրոպայի Մ23 տարեկանների առաջնությունում: Հայ ըմբիշը 55 կգ քաշայինների եզրափակչում 3-7 հաշվով զիջել է Ռումինիայի ներկայացուցչին: Հայաստանի մյուս ներկայացուցիչներ Հովհաննես Հարությունյանն ու Ալբերտ Վարդանյանը Մ23 տարեկանների Եվրոպայի առաջնությունում բրոնզե մեդալներ են նվաճել: Հարությունյանը 87 կգ քաշայինների բրոնզե մեդալի համար գոտեմարտում տուշեով հաղթել է Մոլդովայի ներկայացուցիչ Գաբրիել Լուպասկուին եւ զբաղեցրել 3-րդ հորիզոնականը, իսկ Ալբերտ Վարդանյանը 130 կգ քաշայինների բրոնզե մեդալի համար պայքարում 6-1 հաշվով հաղթել է չեխ Մարսել Ալբինիին:

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

**«Հայմամուլ» ՓԲԸ**
հեռ. 45-82-00, 45-19-11

**«Հայփոստ» ՊՓԲԸ**
հեռ. 51-45-46, 51-45-47

**«Բլից-Մեդիա» ՍՊԸ**
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:


2011
Ժողովուրդ 1
www.armlur.am

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:



*«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*

### ԱՌԱՋԱՐԿ
### հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

**Բաժանորդագրության բլանկ**

Անուն՝ ______________

Ազգանուն՝ ______________

Առաքման հասցե՝ ______________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ______________

*Հեռ.՝(060) 490049*
*0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.*

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **15.03.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: